ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

14 ՀՈՒԼԻՍԻ 2020թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ավագյանը, Սամվել Գրիգորյանը, Անդրանիկ Հակոբյանը, Աղվան Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր գլխավոր մասնագետ՝ Սիլվա Գրիգորյանը

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայքի ավագանու 2020 թվականի հուլիսի 14-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը

1.Ակունքի համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

2.Հաղորդում համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ

3.Հողամասերի օտարման և նպատակային նշանակության փոփոխման մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Լսեցին

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ /

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի,հիմք ընդունելով համայքի ղեկավարի առաջարկը՝ համայքի ավագանին՝որոշում է՝

1. Համաձայնություն տալ Ակունք համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշռին համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Լսեցին

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՁՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանին՝ որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2020 թվականի բյուջեի
երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ

/Հեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ /

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի, 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանապետության կառավարության2009թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1028-Ն որոշումը,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելվածի:
2.Փոխել գյուղատնտեսական նշանակության 0.16001 հա արոտավայրի նպատակային նշանակությունը՝ բնակավայրի նշանակության,բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Ավագանու անդամներ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԷԴԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սիլվա Գրիգորյանը

_____